ները չունեն ***արդ*** կամ ***ամեն*** բառային ցուցիչները, փոխարենը պատմիչն ինքն է ***«Եւ ի զրաւ բանին ասաց»*** նույնպես կայուն միավորով ցուցանում, որ դիալոգն ավարտվում է: Երկխոսություններում ավարտաբանությունները կառուցվում են նախընթաց երկխոսությունների բովանդակության հիման վրա: Այդպիսին է, օրինակ, Շահ-Աբասի և Մելքիսեթ կաթողիկոսի կարճ երկխոսությունը՝ վկայագրված «Թէ որպէս կամ յինչ պատճառէ տարան ի Սպահան քաղաք զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ զքարինք սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով ԺԷ գլխում: Ճիշտ է, Շահ-Աբասի խոսքը չունի առանձնահատուկ կաղապարային միավորներ, բայց դրանով ավարտվում է պատմության տվյալ դրվագը և հնչում վերջնագրի պես. «Դատաստանն քո աստ ոչ լինի առնել, զի վնասն քո մեծ է, այժմ պարտ է քեզ գնալ ի Սպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ՝ արարից զդատաստանն քո» (էջ 188):

Թերևս օրինաչափ ու բնական է, որ երկխոսություններում տեղ են գտնում նաև պատգամներ: Այն առումով, որ պատգամն իր բնույթով ավելի շատ խոսքային-բանավոր միավոր է, քան գրավոր-տեքստային: «Վասն վարդապետութեան եւ կաթուղիկոսութեան տեառն Մովսիսի: Ընդ որում եւ յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով ԻԴ գլխում Սրապիոն վարդապետն իր մոտ է կանչում իր ավագ աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին և տեր Մովսեսի խնամակալությունը հանձնելով նրան՝ ասում-պատգամում է. «Յանձն առնեմ զսա քեզ, զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա՝ և հասուցեալ յարբունս հասակի, և վարդապետական ուսման, և տացես զգաւազան և զպատիւ վարդապետական. և եղիցի օրինութիւն իմ ի վերայ քո և դորա» (էջ 238): Այստեղ առկա են պատգամի ամենակարևոր բաղկացուցիչները՝ հստակ հանձնարարականն ու օրինությունը:

Մենախոսությունը դրսևորվում է հատկապես քնարական զեղումների տեսքով և առավելապես բնորոշ է հեղինակային